Ընթերցանություն.—Հոգվածների ընթերցանություն, արամարանական ճիշտ շեշտադրությամբ և ճիշտ առողջանությամբ. զյուրքից բռնելի փոքրիկ բրոցյուրների, մանկական լրագրերի ընթերցում: Լուս կարդալու վարժություն՝ հետագա խմբակային կամ ողակային սուսակումով: Կարդալ զերերով: Կազմել հոգվածի ծրագիրը՝ հարցերի սպնությամբ: Դյուրքմբռնելի փոքրիկ բրոցյուրների, մանկական լրագրերի ընթերցումը: Բնագրում գտնել արված հարցերին համապահանող հատվածները: Կազմել հոգվածի պլանը լրիվ խոսքերով, հարցերով և մերնադրերով: Գեղարվեստական հողվածների, զործնական նյութերի, վոտանավորների բարձրաձայն և լուս ընթերցանություն: Գրքեցին բնուրույն կերպով սպավելու ունակություն՝ դիմելիք ծեռք բերելու համար: Կարենալ նշել և հարցնել, թե կարդացածի վո՞ր մասերի արտահայտություններն ու բառերը հասկանալի չեն: Հոգվածի գեղարվեստական վերածություն:

Գրավոր. —Պահպանել կանոնավոր գրության առողջապահական բոլոր պահանջները: Մաքուր և պարզ զրություն թղթի, գրատախտակի վրա:

Բանավոր զեկույցի գրալոր ծրագիր կազմելու ու նակություն: Կարօղանալ կազմել ողակին արված աշխատանքի ծրագիրը, զրի առնել յուրաքանչյուր որվահատած աշխատանքները: Կարօղանալ գրավոր պահամաններ տալ արված պարզ հարցերին: Նամակ զրել, դիմում կազմել: Պատի լրագրին լուրեր և փոքրիկ հոգվածներ տալ և այն:

Մաքուր, պարզ և հետզհետե արագացող գրությունն ավելի փոքր տառերով: Կարօղանալ կազմել հետազիբ

դրամի փոխագրադիր: Պարզ դիմում, հաշիվ, ստացական: Առաջնուց կարմված դրավոր ծրագրի համաձայն շարադրել: Գրել փոքրիկ հողվածներ պատի լրազրի խամար: Փորձել համապատասխան նյութերը ուղարկել մանկական պարբերականներին: Կարողանալ կազմել փոքրիկ պարզ արձանագրություններ, անել յեղակացություններ և ամփոփումներ: Արտադրության, դիտողաբացարական թեկողության և շարադրության նյութ գարձնել՝ գործնական գրություններ և քերականական վարժություններ, դիտողություններ բնության մասին, փորձերի, արտադրական աշխատանքի պրոցեսների նկարագրություններ և այլն:

Լեզվական դիտողություններ.—Զայնով նշել ասացվածքի բազմակի մասերը և գրելիս այդ բառերի միջև սուրակետ դնել (Արամը, Սիմակը, Պատրիկը, Վաշինգտոնը, Գավինը, Գուրգենը գնացին... մենք շուտով գնացինք, հասանք, տեսանք, յետ գարձանք... ինձ ել, քեզ ել, նրան ել կանչել են...):

Զայնով նշել առանձին պարզ խոսքերը, վարոնք մանում Են բարդ ասացվածքի մեջ և այլպիսի համարժանքն խոսքերը սոսորակետներով բաժանել (մենք վերացանք, զրեքը վերցրինք, զպրոց զնացինք...) և բառերի ու խոսքերի թվարկումից սուած բութ դնել (յես տեսել եմ հետեւյալ ընկերներին՝ Հայկին, Ներսոյին ու Միսակին մենք շատ բան ենք արել՝ զաներն ենք պատրաստել, սենյակն ենք կազմի բերել...):

Բառերի կապակցության յերկու տեսակ համաձայնություն (յես յեկա, մենք յեկանք, թվով ու զեմքով համաձայնություն) ու ինդոքասություն (ծառը կարեցի, սզոցով կարեցի ծառի ծյուղը): Հայցականի ինդրառությունը (թե վորոց և թե մնորոց):

Բառերի կլասիֆիկացիան ըստ նրանց վերջագրությունների փոփոխության, հոլովվազ բառեր (ջուր, ջրից, ջրի, ջրով, ջրում, դուռ, դուռ, դուռ, դոնից, դոնով, դոնում...) զիտել ած և ածաց զերբայական վերջագրությունները ուղղագրության համար):

Դիտել բայերի իշոնագրչման բալոր վերջապօրությունները : (Դեղքայական և ուսմեղակ բայերի) :

Դիտել բառերի կազմությունը, գտնել բառի հիմքը և արմատը (գրել, գիր, ջրել, ջուր, սիրել, սեր) ածանցները, նախածանց (ան, ապ, ո, դժ, չ) անառն, մասւշ, տղետ, գժբախտ, չտես), վերջածանց (ակ, անտի, փկ-ծովիկ, ուկ-գտանուկ, ուհի-չայկուհի, ավարդիխավոր, ոց-ձաղկանց, իշ-դրիչ, սաման-չայատան, սեկ-հանկարծակի, ուրդ-ժողովուրդ, արան-ճաշաւան...) : Գաղափար վորակական ածականի, քանական և զասական թվականների ու դերանունների մասն:

Ածանցների և վերջապօրությունների ուղղագրությունը : Բարդ բառերի կապակցությունը, առողակապ չե՞րը և գրվում (նահապետ) և չի գրվում (զարնիկեր), առաջին բաղադրիչ մասի ի վերջապօրության գեղքում ի-ն փոփոխում և (գինեկործ) . Համանիչ և նույնանի?

Ուղղագրական տեսրակ պահել ու այնաեղ նշանակել այն բառերը, վորոնց ուղղագրությունը դժվար է : Ուղղագրական բառագրքույինց ողտավելու վարժություն :

Դ. Խ Ո Ւ Մ Բ

Բանակը . —Մասնակցության բեմադրություններին և հանգեսներին՝ թե զպրոցում և թե զպրոցից դուրս : Հասարակական ժողովներմ—խմբի, գորոցի, կամ ըրիգադի կողմից համառոտակի զեկուցով յելութեամականների առաջ :

Ընթերցանությամբ . —Հողվածների, բրոշյարների, դրեի ու լրագրերի արտահայտիչ ընթերցման վարժություններ :

Գրքից, մանկական, պիոներական թերթից ու տեղակրերից ողտավելու ունակություն . ա) գրքերում ու լրուգրերում վորոնել հետաքրքրող հարցերի պատասխանները, բ) կարգացածի մասին տպագրությունները

Հաղորդել, գ) գրքում դուրս բերած վեպքերի ու անգերի գնահատական տառը, դ) կարգացածի մասին իր մեջ առաջացած հարցերի առաջադրություն :

Գրքերի և հոդվածների ինքնուրույն ու լուս ընթերցում : Հաս պահանջի ընտարել բնագրից կարեսը հաղումածներն ու մտքերը և արտագրել : Դասագիրք-ժորնալը ընթերցանություն :

Գրավոր . —Շարտանակել պահպանել կանոնագործության առողջապահական և մեթոդական բոլոր պահանջները : Ավելի արագ ու աղքատ, ավելի մաքուր ու ուղարկ գրելու վարժություն թե մի տողանի և թե անուղղ թղթի վրա . պատմվածքի, զրուցի, հաջորդախայի, ոչ խառանքների և առաջարկված խմբիրների մասին ինքնուրույն կերպով կազմել շարտքության պատմել ուղղագրություն :

Գյուղաբնակչութիւնի և գյուղոցի համար գործական և ընթացելի գրություններ կազմելու և արտադրելու ուղակություն : Կապակցված կերպով գրել եք կենսագրությունը և իր առաջիկա անելիքները : Ինքնուրույն հեղինակություններ՝ ընտարած թեմայով : Սեփական կամ ուրիշների կողմից առաջարկած վորոշ հարցերի վերաբերյալ՝ գրքերում ու լրագրերում կարդացած մաքրերի գրանցումը : Կոչականներ, ձայնարկություններ գրելիս, այդ բառերը սոորակետով բաժանել, կոչականների ու ձայնարկությունների վրա շեշտ կամ յերկար (՝) նշան դնել (Աջո՞ւ, Վաչէիր յեկայի՛) և աշխեկ, Աշուր տուն գնաց . . . , վա՛յ, Զեր բաժանքը ջարվեց . . . Զեր բաժակը, վա՛յ, ջարդվեց . . . Զեր բաժակը ջարդվեց, վա՛յ . . . բալոր աշակերտները կազմակերպեն . . . : Ուղղակի խոսք (նա ասաց «քանի կիվանդ, և») անուղղակի խոսք (նա ասաց, վոր ինք չիվանդ, և) : Ակ-յակ, յուն-ուն, յալ ածանցների ուղղագրությունը :

Լեզվական դիտողություններ . —Զայնով նշել առանձին խոսքերի կապակցությունը բարդ ասացվածքի մեջ և այդ խոսքերը չաղկապներով (և, ու, իոկ, բայց, առ-

կայն, զոր, յեթե) կամ հարաբերական զերանուններով
(ով, ինչ, ուր, յերբ, ուր, զոր) կապակցել, զբելիս
այդ խոսքերը իրարից ստորակետով բաժանելով (յետ
յեկա, իսկ զու գնացիք... նա պիտի դար, բայց չե-
կազ... հիվանդ ելի, սակայն կարողացա զալ... զնա-
ցինք, զոր առնեք... հով կլինի, յեթե անձրե զա...,
և յե այն աղան, վոր զնացի եր, կատարիք այն, ինչ
քեզ ասել եմ... զնա այնեղ, ուր յեզրացր և զնա-
ցել... յեկա այն ժամին, յերբ զատն սկավում եր...):

Զայնով նշել իրար պարզող, բացատրող խոսքերի
կապակցությունը և զբելիս բաժանել բութով, կամ զծով
(նա չուտ հասավ քաղաք՝ կառք եր նստել, նա չուտ
հասավ քաղաք—կտոք եր նստել): Գաղափար անցյալ
կատարյալի ժամին:

Բւզզակի խոսքն անուղղակի գարձնել ե ընդհանա-
ռակը, զծի, ստորակետի գործածություն այդ դեպքում:
Կորացնել բառերի կլասիֆիկացիան ըստ վերջավորու-
թյունների:

Զայնափախտքյան.—Ռւելի ձայնավորների փոփ-
փելը ը-ի (ջուր, ջրի, գիր, զրի) կամ սղումը (աշուն-
աշնան: գարուն—զարնան). յա փոխվում է և—հրյա-
հրեական, մատյան, մատենաղարան, ույ գտանում է
ու—բույս, բուսական, ո զանում է ոյ—կարուկո-
ւոյի:

Զփոփոխվող (չչոլովվող ու չխոնարհվող բառեր)
ահա, չիմի, ապա, արգեն, չանկարծ, ամենուրեք,
չանկարծակի, քաջաբար, քաջորեն, առանց, բացի,
մինչև, ընդ, ըստ: Ուղղագրական բառ-զբառույիներ
կադիլ:

Քերականության զիտելիքների սկսումնատիգո-
ցիա—խոսք, ասույթ, զուգակից բառեր, բառի վերլու-
ծություն, չնչունաբանություն և ձեարանություն:

ԱՌԻՍԱՑ ԼԵԶՈՒ

1-ԻՆ ՏԱՐԻ. (Յ-Ը Դ Կ-Ն Խ-)

Զբայց ուսւա: Հեղուն սովորելու նորասուիք և նշո-
նակության մասին:

Ներածական դասընթաց ուսւա լիզլում գործածվող
Փոնեանիկական ունակություններին ծանոթացնելու հա-
մար առանց արանսուկը լիզլցիայի (տերզամ մատուցա-
ման) արտասանության ձեեր, արտիկուլացիա, յերգ և
առողմանություն:

Բայց ցանկալի յե առաջին տարին դործածել միայն
ներկան, այլ ել պարզ խոնարհում ունեցող բայցերինը:
Բարդ խոնարհում ունեցող բայցերը կարող են գործած-
վել միայն իրեն բացառություն անհրաժեշտության
գեղքում, սկզբում գործ ածել 2-րդ զԼմըը յեղակի,
հետո նաև 3-րդը և 1-ինը, հետո միայն ավելացնել հոգ-
եակին:

Առհասարակ խօւյս տալ բարգացումներից: «Ա»
բացասական մասնիկիր: Ա, ты, он, она, мы, вы, они.

Գոյականներն սկզբում գործ են ածվում յերակիի
ուղղական հոլովում, հետո նաև մյուս հոլովներում,
սակայն պահպանելով չբարգացնելու և հետզհետ անց-
նելու սկզբունքները: Հետո հոգնակիի ուղղականը խույս
տալով անկանոն ձեերից: Գործածական սեռական վեր-
ջավորություններ՝ (один, одна, одно, мой, моя, мое;
твой, твоя, твое, красный, красная, красное; белый
белая, белое):

Թվարկում մինչև 20:

Դործածական, կամունավոր փոքրիկ նախադասությունների բանավոր և գրավոր համախակի կրկնակի պիտի հիմքը կաղմի հետազայտ անցնելիք հոլովման համար:

Տպագիր և ձեռապիր բնագրի դիտակցական արագությունը բառերի ձեռքի մի քանի փոփոխություններով (գեմքերի և թվի) ուսուցչի զեկավարությունը: Գիշատառեր: Լողունդներ կազմել և իւլյուստրացիաներ վերնապրելլ գրավոր ունակություններ ամբաղնդելու Ֆիզոցներից են:

Կետաղբության նշաններ—կետ, Հարցական նշան, բացականչական նշան, կոչտ և փափուկ նշաններ:

Մշակված նյութի ընթերցանությանը զուգընթաց՝ կողմնում են խաղեր, բառ, դոմինո, շարժական աշխարհն: Ցանկալի յե նաև պլակատներ կազմել, գըրցական հողամասում կատարող աշխատանքի դուծիքների կողեկցիա կազմել և նրանց վերնապրել, կարիք կամ ձեղբամոմից մոգելներ կազմել, պատշներ և բանջարեղեն ներկել և նրանց վերնապրել, հերբարիում կազմել և նրանց վերնապրել:

2-րդ ՏԱՐԻ (4-րդ կ.)

Բայից գործ ածել սրբանցյալն (ալ, յա, յի, ու) բայերն այն սիստեմավ գործ ածել, վոր ունակությունն ձեռք բերեն բնազդալար տարբերելու անցյալ կատարյալն և պատճին անկատարից դոնե տանենապրդ և դործածական բառերի վրա:

Գործ ածել սիստեմատիկ կերպով զոյականների յեզակիի մյուս հոլովներն ու հոգնակին (ուզդ, հոլ, բույս տալով անկանոն ձևերից):

Գործնական զործածութեն ԱԱ և Ա նախագիրների. մինչև 100 թվարկութեա:

Աշխատանքի մեջ գերիշխում և հարց ու պատառք խանի ձեռք. Հարցերը պիտի լինեն պարզ, պատմել նկարությունների, փոքրիկ, վոչ բարդ հոգվածների գիտակցական ընթերցանություն, տեքստ հասկանալու: Դժվար և անհրաժեշտ գետքերում թույլատրվում ե բառը կամ դարձվածքը թարգմանել: Տպագիր և ձեռագիր բնագրի գիտակցական արագությունը բառերի ձեռքի մի քանի փոփոխություններով (գեմքի, թվի և ժամանակի փոփոխության (ուսուցչի զեկավարությամբ):

Համառոտ հարց ու պատասխան անցած նյութից: Քերամկանական վարժություններ: Ուղղագրությունը Ր, Կ, Խ, Վ, Ա, ԱՌ տառերից հետո: Այրենական կարգով բառաբան կազմելը:

Խաղերը գուում են զուգընթաց՝ գրքի վրա կատարվող աշխատանքին, սակայն գերակշիռ գերը պատկանում է գրքի վրա տարգող աշխատանքին: Մշակված նյութի որինակելի հավաքումն ու ձեւագորումը:

1. ՀՅԽՀ աշխատավորների տշխառանքի, պայքարի, կյանքի և կենցաղի մասին զարարար տվող ելույթացիաների պլակատներ կազմելը:

2. Բերքի պլամկատներ թվական տվյալներով և վերադրերով:

3. Պլակատ, վորը պիտի ներկայացնի գյուղատրնտեսական մեքենաներ՝ ոկսած ամենանախականից վերացրոծ ամենաբարդով:

4. Հոկտեմբերին բեմադրություն «սոցիալիստական պերաշխություն» լոգոնդի տակ:

5. Բեմագրություններ և վոտանավորներ մայիսի 1-ին.

6. Հեղափոխական յերգեր սովորեն ու յերգելը:

7. Լոգոնդների գեղարվեստական ձևագորումը:

(Այս բոլորը բերված են որինակի համար. Հասկաւալիք յե, վոր առանձին վայրերում և դպրոցներում պլակատների, բհմագրությունների և այլոց համար կարող են և այլ թեմաներ գործադրվել՝ կազմած դպրոցական աշխատանքների և այլ առարկաների ծրագրերի հետ) :

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ.

Կոմաղեցային ծրագրի կիրառման հետեւանքներից մեկն ել յեղել ե այն, վոր Ա. աստ. դպրոցներում մինչեւ այժմ յերկրորդական տեղ և հատկացվել մաթեմատիկական դիմակայիններին և ունակություններին, մինչդեռ մեր յերկրի սոցիալիստական շինարարության արագ տեմպը, ահիճնիկական վերելքը պահանջում և զինվել նաև մաթեմատիկական գիտությամբ։

Տեխնիկային տիրապետելու համար մզվող պայքարը և յերեխանների, բանվորների, կոլտնտեսայինների պոլիտեխնիկական կրթության ինդիրները պահանջում են մշտապես ոգումնել մաթեմատիկայից։ Մեր յերիտասարդ սերունդը, բանվորներն ու կոլտնտեսայինները—պետք ե իմանան մեխանիկայի տարրական հիմունքները, կարողանան հասկանալ մեքենաների կառուցվածքը, ոգումնեն զանազան չափով դարձիքներից, ողարականներից և այլն։ Մեր սոցիալմասական շինարարությունը հիմնված է պլանավորման, ստուգման ու հաշվառման վրա—թվերի լեզուն ամենաճիշտը և համոզեցուցիչն ե։ Ահա այս բոլորի համար հրամայական անհրաժեշտություն և դառնում մաթեմատիկական խորացրած ու սիտեմատիկ գրագիտությունը։

Ա. աստիճանի դպրոցը չառ անելիքներ ունի այդ դրծում։ Նա պետք է հիմք դնի սովորադների մաթեմատիկական գիտելիքներին և ունակություններին՝ այդ գիտության ուսուցումը կենսական—գործնական, կանգանքի համեմի դարձնելու միջոցով։ Այսեղ հարկավոր և առել, վոր մաթեմատիկայի դասավանդումն Ա. աստ.

Պարոցում մինչեւ այժմ յեղել և չոր ու տաղտկացի,
սխոլաստիկ-պասովիվ մեթոդների դործադրման և իրա-
կանությունից կորպած լինելու պատճառով : Մյուս կող-
մից ուսուցչությունը մտահոգվելով կոմպլեքսային թե-
մաների մշակման խնդրով, մաթեմատիկային՝ միայն
այնքան ժամանակի և ուշադրություն և նվիրել, վորքն
պահանջել և «կոմպլեքսը» :

Ա. աստ. մաթեմատիկայի ներկա ծրագիրն ընդ-
դրելում և այդ առարկայի սխսեմատիկ կուրսը, բաշխ-
ված ըստ ուսման սարքիների : Յուրաքանչյուր խմբի
ծրագրում նկատի յեն առնված յերեք տեսակու-
թյուններ — հաշվային, չափումների և գծագրման :
Գործնականում գրանք պետք է սերառեն կազմեն
իրար, — հաշվային, ունակությունները չափումների,
սրանք ել գծագրումների հետ :

Ամեն մի խմբի ծրագրում նշված է, թե ինդիքնե-
րի համար փոր բնագավառներից պետք է նյութեր առ-
նել : Անհրաժեշտ և մեր հաստրակական՝ անահետական
կուլտուրական կյանքի բազմազան յերեսությունների ը-
բեռնումը յերեխաների համար հեշտացնել նաև մաթե-
մատիկական մշակման միջոցով :

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ

Ա. ԽՈՒՄԲ .

Հաշվում .— Յերեխաների տարածական և ժամա-
նակային պատկերացումների հաշվառումն ու ծառումը
աֆ-ձախ, վերե-ներքի, ավելի-պակաս, հասարա-
րակ, խորը-ձանձաղ, յերկար-կարճ, վաղուց-քիչ
առաջ, այսոր-յերեկ, վաղը, շուտ-ուշ և այլն :

Աւղիդ և հակագարձ համրանք մինչեւ 10 : Ծանո-
թյություն թվանշաններին մինչեւ 10 :

Գումարում ու հանում 10-ի սահմանում : Բանավոր
հաշիվ յերկյակներով և հնգյակներով : Գումարման և
հանման նշանները :

Համրանք և թվարկություն մինչեւ 20 : Աւղիդ և հա-
կագարձ համրանք զույգերով, հնգյակներով, յեռյակ-
ներով և քայլակներով :

Գումարում և հանում 20-ի շրջանում :

Աւղիդ և հակագարձ համրանք մինչեւ 100, այնու-
հետև զույգերով և հնգյակներով :

Գրավոր թվարկություն մինչեւ 100 :

Կլոր տասնյակներով գումարում և հանում 100-ի
շրջանում :

Բազմապատկում և բաժանում 20-ի շրջանում :
Բազմապատկման և բաժանման նշանները :

Հասկացողություն ½-ի և ¼-ի մասին :

Գումարում և հանում 100-ի սահմանում (պարզ
գեպերը) :

Հոռմեական թվանշաններ մինչեւ 12 (յիֆեր-
բառար) :

ԱԱՓՈՒԹՅՈՒՆԵՐ ՅԵՎ ԳՅԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ.

Մանոթություն քառակուսուն, ուղղանկյանը, յեռանկյանը և չրչանին կարողանալ տարբերել այդ ձեերն սար գծադրի և առարկաների: Թղթից կամ սովորաթղթից, բարակ տախտակից կարել քառակուսի, ուղղանկյուն և մյուս ձեերը: Վանդակների միջոցով ծրադրել քառակուսի և ուղղանկյուն, իսկ վորոն կոր ամեր ունեցող տարրկայի միջոցով՝ չրչանը:

Յերկարության չափեր. — Մետր, սանտիմետր և դրանց գործածությունը:

Աւզիդ և թեք գծեր: Թղթի վրա քանոնով ուզիդ պիծ անշեցնել: Կարողանալ չրջապատում ցույց տալ ուզիդ ու թեք գծեր:

Աչքաչափով վորոշել փոքր միավորություններ (տարրկաների):

Մանրության չափեր՝ կելուցքմ և կես կիլո: Այդ չափերով փոքր ծանրություններ կշռել, ինչպես և ձեռքն առնելով՝ մոտավորապես վորոշել զանազան տարրերի քաշը:

Պարունակության չափեր. — Լիտր, կես լիտր: Համատերով լիտրի հետ՝ փորձերով վորոշել բաժակի, չե, դույլի պարունակությունը:

Ժամանակի չափեր. — Մինչ որ, հնդորյակ, ամիս: Իմանալ անցած և ընթացիկ ամսվա անունը, տարվա յեղանակները: Ժամ, կես ժամ: Ժամացուցով վորոշել ժամանակը՝ մինչև կես ժամվա ճշտությամբ:

Մանոթություն զանազան հնչյուն դրամներին՝ 1 ուուրլու սահմանում: Մանոթություն թղթադրամներին (1, 3, 5, 10 ուուրլիանոց):

Մանոթություն մի քանի մարմինների—իսպանար-

դին, ձողին, գնդին: Այդ ձեի մարմինները ցույց տալ շրջապատում:

Կարողանալ հասկանալ և գծագրել վանդակներով արագահայտված ամենապարզ ուղղանկյունաձև գիտ-գրամ (վանդակն ընդունելով իրեւ միավոր):

Տարլա ընթացքում հաշվային վարժությունների ժամանակ անհրաժեշտ և զործածել զանազան գիտողական նյութեր—որինակ՝ լուցկի, լորու հատիկներ, ձողեր, նկարներ, համրիչ, թվարանական արկղ և այլն:

Մետրական չափերը պետք և սովորեցնել միայն իրական մետրական չափերով ու չափումներով:

Խնդիրները պետք և պարունակեն 1-2 հարց, նյութերն առնելով յերեխաների կյանքից, հասարակական ու բնության չրջապատի արժեքավոր քաստերից—խաղերից, դպրոցական կյանքից, հասարակական աշխատանքներից և այլն:

Բ. ԽՈԽՄՔ.

Հաշվում. — Գումարում և հանում 100-ի չթղթանում (բոլոր գեղագերը):

Գումարում և հանում յերկանուն անվանական թվերի (որ ուղիղ կոսպեկտ, մետր-սանտիմետր, ժամ-րուպեր):

Թվերի տարրերական համեմատությունը: Աղյուսակային բազմազատկամ և բաժանում 100-ի չթղթանում:

ա) Աւզիդ և հակադարձ համրանք վորոշ թվական խմբերով, փորպես նախապատրաստություն աղյուսակային բազմազատկամ և բաժանման համար:

բ) Բազմազատկամ և բաժանման աղյուսակը:

Առվարեցնել, վոր արտադրէ չների տեղափոխությամբ արտադրյալը չի փոխվում:

Արտադրյակալին (անետալիքնայ) բազմապատճեմ և բաժանում. յերկանիչ թվի բազմապատճեմը միանիշով և ընդհակառակն: Յերկանիչ թվի բաժանումը միանիշի վրա:

Բաժանումը ըստ մասերի և պարունակության: Թվերի քանորդական համեմատությունը:

Տոլոր գործողությունները 100-ի ըրջանում:

Մասեր՝ $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{8}$, $\frac{1}{10}$.

Բանավոր և գրավոր թվարկություն 1000-ի սահմանում:

Տոլոր գործողությունները հարյուրակներով 1000-ի սահմանում:

Գումարում և հանում մինչև 1000՝ համրիչով և դրավոր:

Յերկանուն անվանական թվերի գումարումն ու հանումը:

Բանավոր հաշիվ 100-ի սահմանում:

Բազմապատճան և բաժանման ամենապարզ դեղքը 1000-ի ըրջանում (գրավոր):

Կլոր տասնյակների և հարյուրավորների բազմապատճումը միանիչ թվով. յերկանիչ և յեռանիչ թվերի բազմապատճումը միանիշով:

Յերկանիչ թվերի, կլոր տասնյակների և յեռանիչ թվերի բաժանումը միանիշի վրա:

Չորս գործողությունները 1000-ի ըրջանում:

Փակագծերի բացումը և լուծումը:

Զափում և գծագրում.—Յերկարության չափեր-չափմետք, կիլոմետր, գետնի վրա ուղիղ գծեր անցկացմի ու նրանց չափումը: Զանազան մակերեսների (բա-

կի, բանջարանոցի և այլն) չափումն ըստ յերկարության և լայնության: Աչքաշափով վորոշել հեռավորությունը 100 մետր տարածությունից:

Դասարանի հատակադիմի գծագրումը ցանցապատճեմի վրա: Ծանոթություն մասշտաբին: Թղթի վրա գծել վորոշ յերկարության և ուղիղ գծեր: Աւզպանկյուն գիտաբաժաններ (մի վանդակը ընդունելով միավոր վորոշ քանակության համար):

Ժամանակի չափեր—տարի, տիմս, գեկադ, ժամ, $\frac{1}{2}$ ժամ, $\frac{1}{4}$ ժամ, րոպե: Վորոշել ժամանակիր մինչև 1 լուսկեցի ձատությամբ:

Ժամանակը յերկու ձեռով արտահայտելը (որ. յերկվա ժամը 2 կամ որքա հաշվով ժամը 14):

Քառակուսի. Նրա կողմերի և անկյունների հավասարությունը:

Կառուցել քառակուսի, ովտիվելով անկյունաչափով և քանոնով: Քառակուսի ծենոր, քառ. սանտիմետր, քառ. գեցիմետր:

Շրջանը, քառկուսին և ուղղանկյունը բաժանել դրուց մասերի, թուղթը ծալելով:

Զափել սենյակի և զբոի ողի բարեխառնության ջերմաչափով:

Ծանրության չափեր՝ դրամ, տոնն, $\frac{1}{2}$ կիլոգրամ (500 դ.), $\frac{1}{4}$ կիլոգրամ, 100 դրամ: Զափումներ անել այդ ծանրության կշռաքարերով: 2-3 կիլո ծանրության առարկաների բաշր վորոշել ձեռքն առնելով ուղարկաները:

Ուղղանկյուն. Նրա կողմերի և անկյունների հասկությունը: Անկյունաչափի միջոցով գծադրել ուղղանկյունը:

Կիլոմետր. ուղիղ գծով չափել մի կիլոմետր: Վա-

Բուհ առածության մեջ չափման ուղիղ գծեր և կազմել
դրանց հատակադիմքը, ընդունելով այս կամ այն մտաշ-
ապը: Կազմել ուղղանկյունաձև այդու, բանջարանոցի,
բակի, հրապարակի հատակադիմքը վորոշ մասշտաբով:

Կարգավոր ու գծագրել ուղղանկյուն դիագրամներ,
մի վանդակն ընդունելով իրեն արտահայտիչ մի քանի
ժիավորների:

1-3 Հարցեր պարունակող խնդիրներ լուծել տար-
վա ընթացքում, ողբարիշով այն նյութերից ու յերեսով
ներից, վորի մասին նշված են Ա. խորի ծրագրերում:

Գ. ԽՈԽՄԲ.

Հաշվում.— Բանավոր հաշիվ 100-ի և 1000-ի
սահմանում, (1000-ի ըրջանում ընտրել հետ դեպքերը-
հարյուրակներով ու տասնյակներով գործողություն-
ները):

Բաղմաղատկում և բաժանում 1000-ի ըրջանում՝
յերկանիչ թվի բաղմաղատկումը յերկանիչով, յեռա-
նիչ թվի բաժանումը յերկանիչի և յեռանիչի վրա:

Բաղմաղատկման ստուգումը բաժանումով և ընդ-
հակառակն: Թիվը մի քանի անգամ մեծացնելին ու փոք-
րացնելը:

Բանավոր և զրավոր թվարկություն մինչև
1,000,000: Թվերի բաշխումը կարգերի ու դասերի: Կա-
րողանալ թվերը կարգալ, գրել թելադրանքով, զցել
համբէչի վրա:

Ընդլայնել և սիստեմի վերածել մետրական չափերի
վերաբերյալ գիտելիքները—կիլոմետր, մետր, դեցի-
մետր, սանտիմետր, միլիմետր: Մանրության չափեր—
առնեն, ցենտիներ, կիլոգրամ, զրամ: Հողային տարածու-
թյունների չափերը—ակր, հեկտար: Այդ չափերի փոխա-

զարձ մեծությունը: Չափերի վերածումը և անդրո-
գարձումը:

Վարժվել այդ չափերի գործածությանը չափումնե-
րի և կշռումների ժամանակ:

Տասնորդական կոտորակներ: — Հասկացողություն
տասնորդական կոտորակների մասին: Տասնորդական
կոտորակներով կարդալի ու գրելը: Տասնորդական կո-
տորակների ձևափոխությունները (որ. 0,5=0,50):
Տասնորդական կոտորակների մեծության համեմատու-
մը: Բարդ անվանական թվերի ձևակերպումը տասնոր-
դական կոտորակով (որ. 5 մ 25 սմ=5.25մ) ընդ-
հակառակը:

Հասարակ կոտորակներ—միավորի մասերը՝ ½, ¼,
⅓, ⅔, ⅕, ⅖:

Մասեր ստանալը: — Կոտորակների մեծության հա-
մեմատումը ըստ համարիչի կամ հայտարարի: Հավա-
սար համարիչ կամ հայտարար ունեցող կոտորակների
գումարումն ու հանումը (հայտարարը 10-ից ավելի
շինի): Ամբողջ թվի մի կամ մի քանի մասեր գտնելը
(յերկու գործողությամբ):

Հանեազան թվերի մինչև 1000 գումարման ու հան-
ման պարզ յեղանակները:

Բաղմանիչ թվերի գումարումն ու հանումը:
Գումարման ստուգումը հանման գործողությամբ և
ընդհակառակն:

Սնհայտով որինակների լուծման վարժություններ
(որ. 36+X=54, X-4=18, 65-X=23):

Մեծ թվերի գումարումը համրիչով:

1000-ի ըրջանում թվերի բանավոր բաղմաղատ-
կմումը 2-ով, 10-ով, 5-ով:

Բաղմանիչ թվերի գրավոր բաղմաղատկումը և բաժա-
նումը միլիոնի ըրջանում: Բաղմանիչ թվի բաղմաղատ-

հումը միանիչով, 10-ով, 100-ով, և այլն՝ զլոր տառելաներով, յերկանիշ թվով:

Բազմանիշ թվի բաժանումը միանիչի, 10-ի, 100-ի, 1000-ի և այլն: Կոր տասնյակների և յերկանիշ թվի վրա:

Բազմապատկման և բաժանման տերմինները:

Բազմապատկման ստուգումը բաժանման գործությամբ և ընդհակառակն:

Անհայտով որինակների լուծման վարժություններ (ոք. X. 8=120, 480: X=40, X : 9=90):

Տառողական կառորակների գումարումն ու հաշումը:

Տոկոսներ.—Տոկոսն նրբե Հարյուրյերորդակական ժամը: Տոկոս գրելը (%) : Տվյալ թվի մեջ կամ մի քանիս զանելը (յերկու գործողությամբ), որինակ 200-ի 5 %:

100-ով, 50-ով բանագոր բազմապատկելու յեղանելները:

Մեջտեղում զերո անեցող թվերի բազմապատկումը:

Բազմանիշ թվերի բաժանումը յեռանիշի:

Մնացորդով բաժանում:

Գործողությունների կարգը և փակագծեր:

Մասով զանել ամբողջը (ոք. թվի ½-ը Հավասար 80-ի, ինչի՞ յէ Հավասար ամբողջ թիվը):

Տոկոսները կառորակային մասերով արտահայտել (ոք. 75 տոկոս կամ ամբողջի ½ մաս):

ՅԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ԶԱՓՈՒՄՆԵՐ
ԳԾԱԳՐՈՒՄՆԵՐ

Զափել մի ակը և մի հեկտար:

Եկեղեցի միջոցով կառուցել քառակուսի և ուղղանգամ:

Գարողանալ ցանցապատ թղթի վրա վորոշ մասրչատը լուղումնելով գծագրել ուղանկյուն փոքր հողամանի հատակադիմքը:

Գծագրել ուղղանկյուն դիագրամներ՝ գործադրելով մասշտաբ:

Զափել ուղղանկյան մակերեսը:

Հաշվել ուղղանկյուն հողամասի իրական մեծությունը ավելացնելով ու մասշտաբով:

Կարողանալ հասկանալ դիագրամները՝ արտահայտված վորոշ մասշտաբով ու պայմանական նշաններով:

Յեռանկյուն: յեռանկյան տեսակները՝ ուղղանկյուն, սուրանկյուն, բութանկյուն, հավասարակողմանակյուն, հավասարակողմանք:

Բառակուսուց սուսչացած յեռանկյան կողմերի և անկյունների հատկությունները:

Ուղղանկյուն յեռանկյան գծագրումը:

Ուղղանկյուն յեռանկյան մակերեսի հաշվումը:

Հողամասերի մակերեսի չափումը, վերածելով ուղղանկյան և յեռանկյան հատվածների:

Հատակագծեր և քարտեզներ կարդալիս կարողանալ մասշտաբով:

Քարտեզի վրա մասշտաբի միջոցով կարողանալ գրուել յերկու կետերի հետափորությունը:

Բնություն և յեղոնակի փոփոխությունները գիտելով կարողանալ կազմել ամենապարզ գրաֆիկներ (ոք. ողի բարեխառնության, բուհակերի աճման վերաբերյալ):

Գրաֆիկ աշխատանքներ կատարելիս յերեխանիրը պետք և վարժվեն կարկինի, անկյունաչափի, փոխադրիչի և այլ ուղարկանների գործածության:

Յորդ խմբում խմբի բաղադրությունը պետք և լինեն 2-3-4 հարցանք: և վերաբերեն ինչպիս մեր արդյունաբերության

տրանսպորտին, հաղորդակցության միջոցներին, այնպես և գյուղատնտեսության զանազան ճյուղերին, կուտնատեսություններին, խորհրդային տնտեսություններին, կուլտուրական—կենցաղային և այլ հարցերին, նաև տվյալ վայրի, ռայոնի բնության և աշխարհագրական յերեսություններին:

Դ. ԽՈՒՄԲ.

Հաշվում.— Բանափոր և գրավոր թվարկություն միջիարդի սահմանում՝ կարգեր ու դասեր։ Մեծ թվերի կրծատ գրությունը (որ. 175000 կամ 175 հազար, 14,000,000 կամ 14 միլիոն)։ Թվերի կորացումը։

Չորս գործողությունները մեծ թվերով։ Բազմապատկիման մասնակի դեպքերը—զերոն բազմապատկիչի միջում և վերջում։ Բաժանման մասնակի դեպքերը—զերոն բաժանելի և բաժանմարդի վերջում, քանութում։

Գարդ և բարդ թվեր։ 2-ի, 5-ի, 10-ի, 100-ի, 25-ի, 4-ի, 3-ի, 9-ի վրա բաժանվող թվերի բաժանմականության նշանները։

Թվերի վերածումը պարզ բազմապատկիշների։

Տասնորդական կոտորակներ։ Տասնորդական կոտորակի բազմապատկումն ամբողջով։

Տասնորդական կոտորակի բաժանումն ամբողջով։

Տասնորդական կոտորակի բազմապատկումն ու բաժանումը 10-ով, 100-ով։

Տասնորդական կոտորակն արտահայտել համապատասխան քանակի տոկոսներով և ընդհակառակն (որ. 0,65—65 տոկ., 35 տոկ.—0,35)։

Տասնորդական կոտորակի միջոցով գտնել տվյալ թվի մեկ կամ մի քանի տոկոսը, կատարելով յերկու դորձողություն։

Հասարակ կոտորակներ։ Կոտորակի համարիչը և Հայտարարը։ Կոտորակի փոփոխվելը՝ համարիչի և Հայտարարի մեծանալուց։

Կոտորակների ձևափոխումը—կրծատումը։

Կանոնավոր և անկանոն կոտորակ։ Անկանոն կատարակից ամբողջ թիվ ստանալը։

Մասը թիվն անկանոն կոտորակի վերածելը։

Հավասար և տարբեր հայտարար ունեցող կուտակների զումարումն ու հանումը։

Կոտորակներն ընդհանուր հայտարարի բերելը։

Հասարակ կոտորակների բազմապատկումը և բաժանումը ամբողջ թվով։

Ինչ փոփոխություն և կրում ամբողջ թվերի գումարը, տարբերությունը, արտադրյալը և քանորդը, յերբ փոփոխություն են կրում գործողության թվերը։

Ամբողջ թվի բազմապատկումը տասնորդական և հասարակ կոտորակներով։

Ամբողջ թվի բաժանումը տասնորդական և հասարակ կոտորակի վրա։

Մասով գտնել ամբողջ թիվը (բաժանելով կոտորակի վրա)։

Վորևե թվի տոկոսներով գտնել ամբողջը։

Տասնորդական կոտորակի բազմապատկումը և բաժանումը տասնորդական կոտորակով։

Հասարակ կոտորակի բազմապատկումը և բաժանումը հասարակ կոտորակով (ամենապարզ դեպքերը)։

Հասարակ կոտորակը վերածել տասնորդականի և ընդհակառակն։

Գործողության արդյունքի կորացումը հարյուրերգական մասերով։

ՅԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ , ԶԱՓՈՒՄՆԵՐ
ԳԾԱԳՐՈՒՄՆԵՐ

Խորանարդ : Խորանարդի կողմերի ու կողերի Հայ-
վասարությունը : Խորանարդի բացումը : Խորանարդի
գծագրումը : Խորանարդի ծավալի չափումը :

Խորանարդ չափեր—խոր . մետր , խոր . դեցիմետր ,
խոր . սանտիմետր :

Ուղղանկյուն պրիզմա : Պրիզմայի կողմերն ու կո-
ղերը : Պրիզմայի բացումը :

Պրիզմայի ամբողջ մակերեսութի չափումը : Պրի-
զայի գծագրումը : Ուղղանկյուն պրիզմայի ծավալի
չափումը : Սենյակի և այլ շենքերի ծավալի չափումը :

Շրջանագիծ և շրջան : Շրջանի կենտրոնը , տրամագի-
ծը , շառավիղը : Շրջանագիծի բաժանումը 2, 4, 6, 3 հա-
վասար մասերի :

Մանոթություն տոկոսային փոխադրիչին : Մրա-
միջոցով գծագրել շրջանաձև դիագրամաներ :

Ուղղանկյուն հողամասերի չափում և հատակա-
գծում :

Հասկանալ հատակագծերի պայմանական նշանները :
Տարրական հաշվետարական աշխատանքներ կատա-
րել տարվա ընթացքում :

4-րդ խմբի խնդիրները , վորոնք պետք է կառուց-
վեն 3-4-5 հարցերով , նյութերն առնելու յեն այն բնա-
գավառներից , ինչ վոր նշվեց 3-րդ խմբի համար : Այս-
տեղ հարկավոր և ավելացնել մի քանի նոր նյութեր-
քնական ուժերի շահագործումը , արտադրության մե-
քենացումը , ելեկտրիֆիկացիան , նաև ելեարական
ևներգիայի զորության չափերը—կիլովատտ , կիլօվատտ
ժամ , ձիու ուժ և այլն :

ՀՀ Ազգային գրադարան



NL0237370

53. 44

ԳԻՒՅՈՒՆ 20 ԽՈՊ. (Հ¹/₂ մ.)



ПРОГРАММЫ ШКОЛЫ I^o
(Арм. яз., русск. яз. и математика)

Госиздат ССР Армении
Эревань—1932